

Աշխատանքի տեղավորման կենտրոնը տարբեր ուղիներով ապահովում է բազմազան և գործնական տեղեկատվություն: «Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսանողների հետ մեր աշխատանքի անխուսափելի մասն են կազմում,- ասում է Լուսինեն,- Սակայն աներևակայելի է մտածել նրանց հետ աշխատելու ավելի լավ ձև, քան դեմառդեմ հաղորդակցությունը»: Այս կերպ նա պարզում է ակնկալվող տեղեկատվության տեսակի և չափի մասին ուսանողների և շրջանավարտների իրական կարիքները:

ՀՊԱՀ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնը եվրոպայում և ԱՄՆ-ում կրթությունը շարունակելու հնարավորություններ տրամադրող տեղական և միջազգային կրթական հաստատությունների ցանցի անդամ է: Նման մի հնարավորության, ի դեպ, ԱՈՒԿ-ի ուսանողները ծանոթացան Աշխատանքի տեղավորման կենտրոնի կազմակերպած հերթական սեմինարի ընթացքում, որը վարում էր Տեմպուսի հայաստանյան գրասենյակի համադրող Լանա Կառլովան: Խոսքը վերաբերում է «Էրասմուս Մունդուսի համագործակցության պատուհան» եվրոպական կրթական նոր նախաձեռնությանը: ○



such expo was held in March this year where Lusine represented the University and the ATC. In addition, she was an organization team member during the recent career fair organized by American Graduate Association (AGA).

The Career Center offers a versatile and handy information through different ways. “Information technologies are an unavoidable part of our work with the students,” Lusine says, “However it is unimaginable to think of a better work with them than the face-to-face communication.” This way she understands the real needs of students and alumni in the type and the portion of information.

The Center is actively involved in the network of the local and international education institutions finding new education opportunities in Europe and in the US. A recent “Erasmus Mundus Cooperation Window” seminar by Lana Karlova, the National Tempus Office coordinator, informed the students about such an opportunity through this new education initiative. ○

ԱՈՒԿ-ը Հաբիթաթին օգնում է տուն կառուցել

Լուսինեն ՊԻՎԱԶՅԱՆ, ԱՈՒԿ 3
Նանա ՕԼԳԵՍԱՇՎԻԼԻ,
Քրիստինեն ԲԵԳԼԱՐՅԱՆ, ԱՈՒԿ 4

ԱՈՒԿ-ի գործարար ակումբի գործունեությունն այժմ հունի մեջ է ընկել և բավական արդյունավետ ընթացք ունի: Ինչպես և ամեն լավ բան, այդ աշխատանքները սկսվում են ճիշտ տեղեկատվությունից և ճիշտ շարժառիթներից. փառք Աստծո, մեզ հետ է հրապարակախոսության դասախոս Պեմ Քարզը, ով ապահովում է այս երկու նախապայմանը:

Այս անգամ մենք օգնեցինք Հյունմանիթի ֆոր հաբիթաթ ՅԿ-ին՝ խոր փիրապ գյուղում տուն կառուցելու մի անապահով ընտանիքի համար: Երկու փոքր երեխաների տեր երիտասարդ ընտանիքն ապրում էր նկուղային խոնավ սենյակում, ընդ որում ծնողները գործազուրկ են:

Մենք աշխատեցինք երկու մեծարանների հատակների վրա: Մենք հպարտանում ենք, որ կարողացել ենք օգտակար լինել այդ ընտանիքին: Բացի այդ, հանդիպեցինք մի քանի խանդավառ սփյուռքահայ երիտասարդների, ովքեր եկել էին երկու շաբաթ անշահախնդիր կերպով աշխատելու նախնիների երկրում: Ալեքս և Գրիգոր Ավետիսյանները (Ատլանտա, ԱՄՆ Ջորջիայի նահանգ) Հայաստանում առաջին անգամն էին գտնվում: Նրանք այստեղ զգացել են իրենց հայրենակիցների ջերմ վերաբերմունքը: «Մենք բոլորս էլ որոշել էինք գալ Հայրենիք որպես կամավորներ՝ հանդիպելու և օգնելու կարիքի մեջ գտնվող մարդկանց և ոչ թե ժամանակ վատնել միայն տեսարժան վայրեր այցելելով»- ասաց Ալեքսը:

Թալին Ղազարյանը (Բոսթոն, Մասաչուսեթս) Հայաստան է եկել հատուկ Հաբիթաթի հովանավորությամբ իրականացվող աշխատանքներին որպես կամավոր մասնակցելու նպատակով: Օրիորդ Թալինն այս որոշումը կայացրել է երկու

ATC Helps Habitat Build a House

By Lusine PIVAZYAN, ATC 3
Nana OLGESASHVILI,
Christine BEGLARYAN, ATC 4,

The ATC Business Club activities are now well set up and going on effectively. As everything good, these activities start with the right information and the right motivation. Thanks God, we have Pam Karg, the ATC Public Speaking instructor, who provides both.



This time we helped Humanity for Habitat NGO build a house for a poor family in Khor Virap village, Ararat marz. The young family with two children used to live in a humid basement room, with both parents being jobless.

We worked on the floors of the two bedrooms. We felt proud

տարի առաջ, երբ Հայաստան էր ժամանել Ամերիկայի հայկական համագումարի ծրագրի շրջանակում: Նա սիրում է հայ ժողովրդին, մեր ոգին, մշակույթը, սնունդը...

Մեր սփյուռքահայ բարեկամների նման մենք էլ ենք երջանիկ, որ մաս ենք կազմում բազմաթիվ կարիքավոր հայ ընտանիքների գլխավերևում տանիք ստեղծելու՝ Հաբիթաթի կարեվոր առաքելության:



Հաբիթաթ ֆոր հյուսանիթին ոչ կառավարական բարեգործական կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետությունում աջակցում է համայնքների զարգացմանը՝ օգնելով կառուցելու և վերանորոգելու պարզ, հուսալի և մատչելի տներ, ինչպես նաև պաշտպանում պատշաճ կացարան ունենալու մարդկանց իրավունքը: Կազմակերպությունը Հայաստանում գործում է 2000 թ.-ից: ○

to be helpful to this family. In addition, we met some very nice and enthusiastic Diaspora Armenians working without any financial interest in the land of their ancestors. This was the first time Alex and Gregor Avetisian (Atlanta, Georgia) were in Armenia and spent 15 days working with Habitat. They felt the warmth and hospitality of fellow Armenians and they feel like home. "We all decided we will come to the Motherland as volunteers to meet and help people and not waste our time by just visiting sightseeing," Alex said.

Taleen Ghazarian (Boston) came to Armenia to volunteer for Habitat for Humanity. She made her decision two years ago when she visited Armenia with the Armenian Assembly of America. She loves the people, the spirit, the culture, the food...

They were easy-going personalities; working with them was a pleasure. Like our new friends from Diaspora, we are so contented with the feeling that we, the ATC students, are a part of the hundreds of volunteers involved in the Habitat's important mission of providing roofs above the heads of many poor Armenian families.

Habitat For Humanity Armenia is a Non-government Charitable Organization that supports community development in the Republic of Armenia by assisting in building and renovating simple, decent and affordable homes, as well as advocating the right to decent shelter as a matter of conscience and action. Habitat is active in Armenia since 2000. ○

Ջիմ Քրենեկը գիտե, թե ինչպես պետք է խրախուսել

Օլգա ԿՈՒԴՈՅԱՆ, ԱՈՒԿ 5



Ապրիլի 27-ին ԱՈՒԿ-ի հերթական ուրբաթօրյա սեմինարի հյուրն էր հիմնադրամների մասնագետ Ջիմ Քրենեկը՝ Միչիգանի համալսարանից: Դոկ. Քրենեկը Հայաստանում էր գտնվում երկշաբաթյա առաքելությամբ՝ որպես ՎՕԿԱ-ՎԻՍՏԱԱ կազմակերպության կանավոր, օգնելու «Կանաչ արահետ» ՀԿ-ին կազմել հետագա զարգացման ռազմավարական պլան:

Սեմինարը վերաբերում էր վարձահատույց լինելու գաղափարին: Մենք ուշադրությամբ լսեցինք բարեգործության ու մարդասիրության վերաբերյալ դոկ. Քրենեկի սահմանումները: «Մարդասեր լինել անպայմանորեն չի ենթադրում հարուստ լինել, ասաց դոկ. Քրենեկը,- Ամենաթանկ բանը, որ մարդիկ տրամադրում են այլոց՝ իրենց ժամանակն է»:

Դոկ. Քրենեկը այնուհետև խոսեց հիմնադրամների և ավանդաշնորհներով ձևավորված ֆոնդերի մասին՝ որպես որևէ կազմակերպության հաջողության կարևոր գործիքների: Ըստ նրա, հիմնադրամները շահույթ չհետապնդող անկախ իրավաբանական անձեր են, որոնք տրամադրում են հնարավորություններ, դիմում են ռիսկի և չեն վախենում ձախողվելուց: Ես համեմատեցի այդ սահմանումը մեր իրադրության հետ և մտածեցի. մենք էլ չենք վախենում ձախողվելուց, քանզի մենք ԱՈՒԿ-ի ուսանողներ ենք, որի թիկունքին կանգնած է «Ազոբիզգեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ԱՀԿՄԿ) հիմնադրամը:

Ես ուրախ էի, որ ավարտելուց առաջ մեր վերջին ուրբաթօրյա սեմինարներից մեկը հենց դոկ. Քրենեկը վարեց: Պետք է նշեն, որ դոկ. Քրենեկը իմաստուն մարդ է. այնպիսի տպավորություն ունեն, թե նրա զրպանները լիքն են լավ գաղափարներով և ինքը հաճույքով բաժանում է դրանք մեզ

Jim Krenek Knows How to Encourage

By Olga KUDOYAN, ATC 5

The ATC invited James Krenek, Michigan State University, an expert in creating foundations, to conduct a seminar for the senior students on April 27 while he was on a two-week training visit with the Green Lane NGO as a VOCA/VISTAA volunteer. He helped the Green Lane with strategic planning for the future developments of this promising NGO.

The main idea Dr. Krenek suggested during the seminar was the idea of giving back. We listened with interest to his con-



cept of evaluating charity versus philanthropy. "Philanthropists are not necessarily wealthy people," Dr. Krenek said, "Time is the most precious gift people give to others."

Dr. Krenek then spoke about foundations and endowment funds as important tools to shape the success of any organization. According to him, foundations are independent non-profit legal entities that provide opportunities, take risks and are not

հետ: Նա գիտե, օրինակ, թե ինչպես կարելի է խրախուսել մեզ՝ աջակցելու ԱՌԿ-ին ապագայում, երբ մենք օրերից մի օր ի վիճակի լինենք այդ անելու: Առհասարակ, անձամբ ես այնպիսի զգացողություն ունեմ, որ սեմինար վարելու դոկ. Քրենեկի ոճը թերևս ամենահետաքրքրականն էր, որ ես երբևէ հետևել եմ:

Զիմ Քրենեկը նաև հանդիպում ունեցավ ԱՅԿՄԿ-ԱՌԿ-ի աշխատակազմի և դոկ. Դանի հետ: Ըստ ԱՅԿՄԿ հանրության հետ կապերի պատասխանատու Սոս Ավետիսյանի, հանդիպումը տևեց շատ ավելի երկար, քան նախատեսված էր և աշխատակազմը մի շարք արժեքավոր գաղափարներ կորզեց դոկ. Քրենեկից ԱՅԿՄԿ-ԱՌԿ-ի հետագա կազմակերպական զարգացման տեսակետից:

Ավելացնեմ, որ դոկ. Քրենեկը ԱՄՆ-ում օգնել է 16 հիմնադրամների ստեղծմանը: Եվ մի քանիսը ստեղծվել է Հայաստանում՝ նրա անմիջական խորհրդատվությամբ:

Սա Զիմ Քրենեկի 4-րդ այցելությունն էր Հայաստան. մի քանի տարի առաջ աշխատել է ԱՄՆ գյուղողեպարտամենտի նախկին Մարկետինգի աջակցության ծրագրի շրջանակում: ○



afraid to fail. I confronted this definition with our situation and I thought: we are not at all afraid to fail, because we are the ATC that has the ICARE Foundation behind.

I was so pleased to have Dr. Krenek as the lecturer at one of our last Friday seminars before our graduation. I should mention Dr. Krenek is a wise man: it seems like his pockets are full of great ideas and he shares them with us generously. He knows, for instance, how to encourage us to support the ATC in future when we become capable someday. In general, my personal feeling is that Dr. Krenek's style of conducting a seminar was perhaps the most remarkable I had ever seen.

Jim Krenek also had a meeting with the ICARE/ATC staff and Dr. Dunn. According to the ICARE PR Specialist Sos Avetisyan, the meeting lasted much longer than scheduled and the staff grabbed some valuable ideas from Dr. Krenek on the future organizational development of the ICARE/ATC. Dr. Krenek has helped to set up 16 foundations in the US and a few more in Armenia. This was his forth visit to Armenia; he has had three successful missions with the former USDA MAP project a few years ago. ○

ԱՌԿ-ի հետազոտական խմբի գործունեությունը

Թեև ԱՅԿՄԿ հիմնադրամն ունի գործունեության ընդամենը երկու տարվա պատմություն, հիմնադրամի բաղկացուցիչ Ագրոբիզնեսի հետազոտական խումբը (ԱՂԽ) գյուղատնտեսական հետազոտությունների ոլորտում շուրջ հինգ տարվա փորձառություն ունի: ԱՂԽ-ն ԱՌԿ-ի դասախոսական կազմին հնարավորություն է ընձեռում գյուղատնտեսության (ագրոբիզնեսի) և հարակից թեմաներով հետազոտական աշխատանքների հայտեր ներկայացնել և իրականացնել՝ հայաստանյան ագրոբիզնեսի վերաբերյալ իրենց հետազոտությունների արդյունքները ազգային և միջազգային հանդիպումների ժամանակ հրամցելու նպատակով:

ԱՂԽ-ում ընդգրկված են բարձր որակավորում ունեցող հետազոտող գիտնականներ, սոցիալոգների և տվյալների հավաքման փորձառու աշխատանքային խումբ և տվյալներ մշակող պրոֆեսիոնալ վերլուծաբաններ: Խմբի իրականացրած բազմաթիվ ուսումնասիրություններ ընդգրկել են Հայաստանի բոլոր մարզերը: Խմբի հարցումներին ու փաստահավաքման աշխատանքներին հաճախ ընդգրկվում են ԱՌԿ-ի ուսանողները:

Ագրոբիզնեսի հետազոտական խմբի իրականացրած ծրագրերից են՝ «Խորքային հորերի ուսումնասիրման ծրագիր», «ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի աջակցությամբ աշխատող կաթի իրացման սպառողական կոոպերատիվների տնտեսական արդյունավետության վերլուծությունը», «Հայաստանի գյուղական վարկային հաստատությունները. վարկային ակունքներ» «Օրգանական եղանակով աճեցված արտադրանքի շուկայի գնահատում և զարգացում», «Արդյունաբերական թռչնաբուծության ճյուղի մատակարարման շղթայի գնահատում», «Թռչնագրիպի խուճապի

Agribusiness Research Group Activities

Although the ICARE has two years of operation history, its Agribusiness Research Group (ARG) has about 5 years of relevant experience in agricultural research. The ARG provides the ATC faculty with the opportunity to solicit and conduct research on agriculture/agribusiness and associated topics and to promote their research on Armenian agribusinesses at national and international meetings in many different countries.

ARG has qualified researchers, experienced survey and data collection team and professional data analysts. Many studies conducted by the Group covered all regions of Armenia. The ATC students are often involved in survey and data collection.

Some of the projects completed by the ARG include: "Rural Credit Institutions in Armenia: Credit Clubs", "Market Assessment and Development for Organically Grown Produce", "Conducting assessment in the commercial poultry sector supply chain", "The Socio-Economic Impact of the Avian Influenza Panic on the Poultry Chain of Armenia", "Baseline Study for the Armenian Food Safety System Project", "Severe Weather Warning Survey", "Backyard Poultry Farmer Study", and others.

The ongoing research projects include: "Sustainability of Agricultural Production in Armenia – analysis of the current situation and improvements through farm advice and facilitation of policy action to adapt framework conditions using the RISE (Response Inducing Sustainability Evaluation)"; and "Teaching and Learning Technologies and Student Success in Agricultural Higher Education of Caucasus". The first one is being implemented jointly with the Swiss College of Agriculture.

The Agribusiness Research group uses the newest survey, data collection and analysis methods, schemes, and software available internationally, successfully combining them with

սոցիալ-տնտեսական ազդեցությունը Հայաստանի թռչնաբուծության շղթայի վրա», «Հայաստանում սննդի անվտանգության համակարգի ծրագրի համար հիմքերի գնահատում» և այլն:

Ընթացքի մեջ են «Գյուղատնտեսական արտադրության կայունությունը Հայաստանում. ներկա իրավիճակի վերլուծություն և բարելավումներ տնտեսություններին տրամադրվող խորհրդատվության և քաղաքականության իրականացման խթանման միջոցով՝ կառուցվածքային պայմանների հարմարեցման նպատակով, օգտագործելով RISE (Կայունության արդյունաբար գնահատման համակարգը)» և «Կովկասի բարձրագույն կրթության համակարգում դասավանդման և ուսանման նորագույն տեխնոլոգիաները և ուսանողների հաջողության գնահատումը»:

ԱՀԽ-ն իր աշխատանքում օգտագործում է հարցումների, տվյալների հավաքման և վերլուծության նորագույն մեթոդները, սխեմաներն ու համակարգչային ծրագրակազմերը՝ այդ ամենը հաջողությամբ համադրելով Հայաստանի և տարածաշրջանի ագրոբիզնեսի և գյուղական վայրերի առկա իրողություններին հետ:

ԱՀԽ-ի հետազոտական ծրագրերի պատվիրատուներն են եղել Համաշխարհային բանկը, Շվեյցարիայի ազգային գիտական հիմնադրամը, ԱՄՆ գյուղղեպարտամենտի արտաքին գյուղատնտեսական ծառայությունը, Դի-Էյ-Այ-ը, ԱԳԶԿ-ն և այլ կառույցներ:

the agribusiness and rural actualities of Armenia and the region.

The customers of the Agribusiness Research Group have been the World Bank, the Swiss National Scientific Foundation, the USDA Foreign Agricultural Service, DAI, CARD, and others.



ԱՈՒԿ-ը մասնակցեց դեպի Ծիծեռնակաբերդ քայլերին



**Էմմա ՄՈՎՍԵՍՅԱՆ
ԱՈՒԿ 4**

Ապրիլի 24... Այդ օրը հարյուր հազարավոր հայեր ամբողջ երկրից և օտարազգիներ բազմաթիվ այլ երկրներից այցելեցին Ծիծեռնակաբերդ՝

Արևմտյան Հայաստանում 1915-ի Մեծ եղեռնին զոհ գնացած մեկուկես միլիոն հայերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու: Հուշահամալիրը բաղկացած է արևմտահայ 12 գավառներում իրականացված ցեղասպանության զոհերի հիշատակը խորհրդանշող 12 խոնարիված պատերից, որոնք կարծես պաշտպանում են կենտրոնում վառվող հավերժական կրակը և հայոց վերածննդի խորհուրդը ներկայացնող սլաքից:

Մենք՝ ԱՈՒԿ-ի ուսանողներս, Ծիծեռնակաբերդ այցելեցինք նախորդ գիշերը՝ ապրիլի 23-ին՝ միանալով Նիկոլ Աղբալյան ուսանողական միության նախաձեռնած ոգեկոչման երթին, որին մասնակցեցին հազարավոր ուսանողներ Հայաստանի բոլոր համալսարաններից: Մեզ հետ էին նաև մեր վրացի ընկերները: Երթը սկսվեց Հանրապետության հրապարակից: Հետդարձին ուժեղ անձրև սկսվեց. կարծես բնությունն ինքն էր սգում մեր նախնիների համար:

Բոլորովին վերջերս ԱՄՆ Օհայո նահանգը դարձավ Հայոց Ցեղասպանությունն ընդունած 40-րդ նահանգը. 2007թ. ապրիլի 17-ին այդ մասին հրամանագիր ստորագրեց նահանգապետ Ստրիքլենդը:

ATC Marched to the Genocide Memorial

**By Emma MOVSESYAN
ATC 4**



April 24th... On this day, Armenians and non-Armenians from all over the country and from numerous other countries come to Tsitsernakaberd monument in Yerevan to pay tribute to the memory of over 1,500,000 innocent Armenians massacred during the 1915 Genocide in West Armenia, Ottoman Empire.

If you visited it at least once then you have noticed the monument consisting of two memorial structures: a central memorial structure with 12 that protect the eternal flame and symbolize the 12 regions in where the Genocide took place and the huge arrow pointing upward to the sky and symbolizing the rebirth of the Armenian nation. Hundreds of thousands of people put flowers around the eternal flame in Tsitsernakaberd.

We, the ATC students, joined the rest of the students from different Armenian universities a day before, in the night of April 23 in their torch march. Our Georgian friends were with us in this march organized by Nikol Aghbalyan Student League. The march started from the Republic Square up to Tsitsernakaberd. When we reached the monument we put the flowers around the flame. On the way back, a heavy rain began; it seemed the nature was mourning for our innocent ancestors.

By the way, Ohio became the 40th state to legislatively recognize the Armenian Genocide: Governor Strickland signed an order on this on April 17.

**Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation
74 Teryan St., Yerevan, Armenia
In association with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia
Tel: (37410) 52-28-39, 56-95-70;
Fax: (37410) 56-62-21 E-mail: info@icare.am
www.icare.am/atc
Հ. ՌԱՄԿԷՅ՝ԵՇ ՃՕՅՃՕՍՅ Կ ԻՅԿԻ ՌՃԿ . օ Ռ՝Յ Կ, Ի ՊՈՅ Կ 74**